ՊՈՍՏՄՈԴԵՌՆԻԶՄԸ ՈՐՊԵՍ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ԳԱԳԻԿ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Ամեն շիրմաքարի տակ հանգչում է համաշխարհային պատմությունը:
Յ. Գյոթե

Ներկայումս ընթացող համաքաղաքակրթական փոխակերպումները որակապես փոխում են աշխարհի ավանդական պատկերը: Նոր աշխարհակարգն իր բազմաշերտ տեղեկահաղորդակցական խաղային տեխնոլոգիաներով պարբերաբար ծնում է ագրեսիվության, անորոշությունների, անպատասխանատու վարքի, թատերականացված գործողությունների օջախներ: Համահարթեցնող արժեքների գերակայության պայմաններում (ապաանհատականացում, մշակույթի զանգվածայնացում, տեղեկատվական բռնություն, սպառողական արժեքների գերիշխանություն, աղետային գիտակցություն) գաղափարի բռնությանը (սովետական ամբողջատիրություն) հաջորդում է դատարկության բռնությունը (հետարդիական հասարակություն): Համաշխարհայնացման բացասական հետևանքների ծավալման խորապատկերում մարդկության պատմական հեռանկարի ապահովման խնդիրն անհանգստացնում է ժամանակակից ինտելեկտուալ ընտրանու շատ ներկայացուցիչների: Պատմափիլիսոփայական իմաստով դրանք դառնում են առանցքային նշանակություն ունեցող կարևորագույն հարցեր:

Բնութագրելով մարդկության թաքուն (էզոթերիկ) պատմական կյանքի և նրան սպասող մոտ ապագայի պատկերը՝ հունգարացի գրող և հրապարախոս Բ. Համվաշը դեռևս 1943 թ. հրատարակված «Զրհոսը» էսսեում, կարծես կռահելով մեր ժամանակների հոգևոր իրավիճակը, նկատում է. «Այստեղ հանգչում է ոգին, անառականում է ճաշակը, կրոնը դառնում է սնոտիապաշտություն, աստվածներից ստեղծվում են կուռքեր, առողջ մտքի փոխարեն՝ ծառանում են մշուշապատ միֆը և տարտամ մնացուկը»[1]: Մի՞թե հետարդիական հասարակություններում իրականանում են Բ. Համվաշի մռայլ կռահումները:

XIX դարից սկսած՝ փիլիսոփայական անդրադարձներում ուրվագծվում են արդիականության, «մոդեռն աշխարհի» լուսավորական նա-

[1] **Բ. Համվաշ,** Զրհոսը // **Էդ. Աթայան,** Հոգի և ազատություն, Եր., «Սարգիս Խաչենց», 2005, էջ 569:

խազծի քննադատությանը նվիրված հետազոտությունների աննախադեպ աճ ու տարածում: Նախընթաց պատմության քննադատական վերաիմաստավորումն իր բարձրակետին է հասնում պոստմոդեռնիզմի փիլիսոփայության մեջ: Հետարդիականության թե՛ մշակույթում, թե՛ փիլիսոփայության մեջ ամեն ինչ թույլատրելի է, ամեն ինչ կարելի է: Մարդն այլևս չի ընկալվում որպես լուսավորականության շրջանից գովերգվող, ռացիոնալության բացարձակ իմպերատիվներով օժտված բնության լուսապսակ: Պատմության պոստմոդեռնիստական մեկնաբանության համաձայն՝ սուբյեկտը՝ որպես պատմության արարիչ, որպես սեփական բախտն ու ճակատագիրը կերտող ու դրա համար պատասխանատու անհատ, պատմական թատերաբեմից անհետանում է: Լուսավորականության պատմափիլիսոփայական նախագծի քննադատության ու դրա կառուցալուծարման (դեկոնստրուկցիա) գլխավոր նպատակը մարդկային կեցության ավանդական աշխարհի և դրա ընդունման վրա հիմնված գոյաբանության ու դրան համապատասխանող իմացաբանության ցանկացած ներկայության բացասումն է: Պոստմոդեռնիզմն իրականացնում է մարդու՝ որպես սեփական «Ես»-ը գիտակցող, ինքնավար սուբյեկտի մասին ավանդական պատկերացումների արմատական վերանայում և վերաիմաստավորում: Ներկայությանը փոխարինում է բացակայությունը: «Բնության լուսապսակին» փոխարինում է «ցանկությունների մեքենան» կամ «մտագարը» (Ժ. Դելյոզ, Ֆ. Գվատարի) և կամ «Ուրիշը» (Մ. Բլանշո, Է. Լևինաս, Ժ. Լական): Մ. Ֆուկոն ազդարարում է «սուբյեկտի մահվան» մասին հայտնի դրույթը: Կյանքի հիմնավորման փոխարեն քննարկվում է մահվան պայմանների ապահովման խնդիրը:

Մ. Ֆուկոյի կարծիքով՝ մարդը եվրոպական մշակույթի ոչ վաղ անցյալի ձեռքբերումն է: Լուսավորականության դարաշրջանում նրա՝ որպես «առանձին անհատականության» ի հայտ գալը գիտելիքի արմատական դիրքավորումների փոփոխության արդյունք էր, և «եթե այդ դիրքավորումներն անհետանան այնպես, ինչպես մի ժամանակ ի հայտ են եկել, եթե ինչ-որ իրադարձություն… դրանք կործանի, ինչպես XVIII դարի մայրամուտին կործանվել է դասական մտածողության արգասաբեր հիմքը, ապա կարելի է երաշխավորել, որ մարդը կանհետանա այնպես, ինչպես անհետանում է ափամերձ ավազի վրա պատկերված դեմքը»[2]:

Պոստմոդեռնիզմի քննադատությանն է արժանանում լուսավորականության փիլիսոփայության այն մեկնաբանությունը, համաձայն որի՝ պատմությունը անցյալի, ներկայի և ապագայի պատճառահետևանքային գծային անքակտելի կապերի այնպիսի հաջորդականություն է, որտեղ բոլոր իրադարձությունները պայմանավորված են խիստ որոշակի տրամաբանական կարգով: Պատմության լուսավորական գաղափարը հանուն մարդու, մարդու և նրա անընդմեջ առաջընթացի ու կատարե-

[2] **Фуко М**. Слова и вещи. Археология гуманитарных наук. СПб., 1994, с. 404.

լագործման փիլիսոփայական նախագիծ է (այս իմաստով պատմությունը նպատակաբանական է): Ի տարբերություն լուսավորական նախագծի՝ պոստմոդեռնիստական պատկերացումների համաձայն՝ պատմությունն օբյեկտիվ անհրաժեշտության վերահսկողությունից դուրս գտնվող հավանական, հաճախ պատահական, քաոսային իրադարձությունների ամբողջություն է: Պատմությունն այլևս այն տարածությունը չէ, որտեղ պետք է ծավալվի մարդու մարդկայնացման գործընթացը: Ճիշտ հակառակը. այն բացահայտում է «Ադամորդու» բոլոր կործանարար հատկանիշները: Մարդն անկասելիորեն սլանում է դեպի իր գոյության սահմանը, իր բնույթի սահմանային դրսևորումներին ընդառաջ: «Պոստմոդեռնի վիճակը» հանրահայտ հետազոտության հեղինակ Ժ. Լիոտարը նկատում է, որ չկա և չի կարող լինել պատճառահետևանքային կապերով պայմանավորված կամ նախասահմանված որևէ ծրագիր կամ նպատակ, պատմությունն անսահման և հավերժական փոխակերպումների բաց տարածություն է, որտեղ մեծ պատումները (**մետանարատիվները,** օր՝. բարին, ճշմարիտը, գեղեցիկը և այլն), որոնց միջոցով լեգիտիմացվում, հիմնավորվում և կառուցարկվում են սոցիալական բոլոր պրակտիկաները, այլևս գործառական չեն: «Մայրամուտի» շրջանում դրանք չեն կարող հանդես գալ որպես աշխարհի սոցիալ-պատմական և մշակութամարդաբանական պատկերը պայմանավորող հայեցակարգային արժեքներ: Դասական պատմափիլիսոփայության մեջ մեծ պահանջարկ վայելող սոցիոմշակութային դիրքորոշումները, այն «մեծ պատումները, որոնք սահմանում էին հասարակական զարգացման տվյալ մակարդակին բնորոշ ռացիոնալության տիպը և դրան համապատասխանող լեզվական ոճը, հետարդիականության շրջանում արժեզրկվում են, մետապատմվածքներն այլևս կորցրել են իրենց համոզչությունը»[3],-նկատում է Ժ. Լիոտարը: Ըստ պոստմոդեռնիստների՝ ունիվերսալության նկատմամբ դասական պատմափիլիսոփայության հավակնություններն այլևս վերապահելի, եթե չասենք կասկածելի են և, ըստ էության, ոչ այլ ինչ են, եթե ոչ հետասերում (ատավիզմ): «Առավելագույնս պարզեցնելով,- նկատում է Ժ. Լիոտարը,- պոստմոդեռնիզմը կարելի է սահմանել որպես մետապատումների նկատմամբ անվստահություն. անկասկած, սա գիտությունների առաջընթացի արդյունք է, և հենց այդ առաջընթացով է պայմանավորված այդ անվստահությունը»[4]: Մետապատումների մայրամուտը անմիջականորեն կապված է սոցիալական հարաբերությունների բնույթի ու գործառությունների առանձնահատկության նոր ըմբռնման հետ: Ժ. Լիոտարը սոցիալական հարաբերություններն ընկալում է որպես լեզվական խաղեր, որոնք «հասարակության գոյության համար

[3] **Лиотар Ж.-Ф.** Постмодернистское состояние: доклад о знании // Философия эпохи постмодерна: сб. пер. и реф., Минск, 1996, с. 152.

[4] Նույն տեղում, էջ 141:

անհրաժեշտ նվազագույն հարաբերություններն են»: Ի սկզբանե մարդը ներառված է սոցիալական բարդ և դինամիկ կապերի ու հարաբերությունների ցանցի մեջ, բայց այդտեղ «նա իրենից էական ոչինչ չի ներկայացնում»[5]: Հասարակությունն ատոմացվում, անհատացվում է: Գլոբալ մասշտաբով վիրտուալ տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացման հետևանքով օրավուր նվազում է անձնավորված սոցիալական կապերի տեսակարար կշիռը: Հասարակական դաշինքի վրա հիմնված ունիվերսալ սոցիալականությունն իր տեղը զիջում է ժամանակավոր կապերի ու շփումների վրա հիմնված ցանցային սոցիալականությանը: Դեմ առ դեմ սոցիալական կարճատև կապերը ձեռք են բերում ժամանակավոր, երբեմնակի բնույթ՝ սոցիալական տարածության մեջ որևէ կերպ չպայմանավորելով մարդու դիրքորոշումը: Զգտելով արագորեն հարմարվել փոխակերպվող պայմաններին՝ մարդիկ սկսում են մերժել կայունությունն ու տևականությունը որպես բնականոն գոյության կարևոր հիմունքներ:

Անհատի համամասնակցությունն իմաստաարժեքային առումով տարբեր, երբեմն ուղղակի հակադիր սոցիոմշակութային հանրույթներին, առանց դրանցից որևէ մեկի հետ սեփական անձի իրական նույնականացման, արտահայտվում է պոսմոդեռնիստական «**խաղ**» հասկացությամբ: Խաղը դառնում է աշխարհայացքային-մեթոդաբանական սկզբունք: Պոստմոդեռնիստների համոզմամբ՝ այն, բարձրացնելով տարբերությունների հանդեպ մարդու զգայունակությունը, առանձին երևույթների անչափելիության, անհամատեղելիության, տարօրինակության նկատմամբ հանդուժողականություն է զարգացնում: Սոցիալական կառուցարկումը՝ որպես կեցության իմաստային առանցքի կարևոր բաղադրիչ, դուրս է մղվում սոցիալապես անպատասխանատու «նշանակությունների խաղի» կողմից (դեկոնստրուկցիայի սկզբունք): Այժմ կարելի է պարզապես լողալ կյանքի հոսքով, խաղալ ու հնարել: Ամեն ինչ խաղ է կամ կարող է դիտարկվել որպես այդպիսին: Ճշմարտության խնդիրն այլևս փիլիսոփայությանը չի ոգեշնչում, «ավելի կարևոր են Հետաքրքիրը, Դիտարժանը կամ Նշանակալին»[6]: Նույնիսկ տեխնոլոգիաները խաղի տարատեսակներ են, սակայն այստեղ հաղթում են ոչ թե ճշմարիտը, բարին կամ գեղեցիկը, այլ արագն ու արդյունավետը: Խաղի հիմնական ձևը լեզվական խաղն է: Սոցիալականությունը ոչ այլ ինչ է, քան «լեզվական խաղերի խճճվածություն» (Ժ. Լիոտար): Խաղը՝ որպես սոցիալական գործունեության փոխաբերություն, արտահայտում է «նորմի բռնությունից ազատագրվելու» (Վ. Վելշ) հետարդիական գիտակցության ձգտումը: Խաղարկվում է անգամ մահվան՝ որպես առկա կեցության ավարտի մետաֆիզիկական արժեքը:

Եթե նախընթաց պատմության մեջ աշխարհի պատկերը ներկա-

---

[5] Նույն տեղում, էջ 145:

[6] **Делез Ж.** Что такое философия? // Ж. Делез, Ф. Гваттари. М.- СПб., 1998, с. 108.

յացվում էր հիմքում ունենալով ներկայության և լոգոսի գաղափարները, ապա աշխարհի հետարդիական պատկերի հիմքում դրվում են բացակայության և մատեզիսի* գաղափարները (Մ. Ֆուկո): Պոստմոդեռնիզմի կարկառուն ներկայացուցիչ Ժ. Բոդրիյարը ներկայացնում է հավաքածուներ կազմելու միջոցով խորհրդանիշային անմահության հասնելու գաղափարը: Հավաքածու կազմողը վերապրում է ինքն իրեն և, սահմանազանցելով մահը, հասնում խորհրդանիշային անմահության[7]: Հավաքածուի միջոցով, որտեղ ցուցանմուշներն իրենց մեջ ամբարել են այն կազմող մարդու հոգին ու ոգին և դարձել նրա էկզիստենցիայի առարկայական դրսևորումը, հնարավոր է դառնում, թեկուզ խորհրդանիշային ձևով, սեփական ներկայությունն ամրագրել անգամ մահվանից հետո, բացակայությամբ ամրագրել ներկայությունը: Ըստ Ժ. Բոդրիյարի՝ հավաքածու կազմելը մարդուն առարկայացնող «սերիական խաղ» է: Մշակութային արտեֆակտները, որոնք «հագեցված» են ժամանակի բռնությունը հաղթահարելու ձգտումն ունեցող հավաքածու կազմողի անհատականությամբ, ընդունակ են բազմակի վերապրելու սեփականատիրոջ մարմնականությունը:

Հետարդիականության շրջանի մարդը միայն կյանք ու մահ չի խաղում: Խաղը՝ որպես մարդկային էության իրացման եղանակ, դառնում է և՛ հետազոտության առարկա (Հայզինգա), և՛ գոյաձև, և՛ աշխարհընկալում, և՛ աշխարհայացք: Պոստմոդեռնիստական հետազոտություններում խաղը դառնում է սահմանագծի, եզրաբնակության (մարգինալություն) ստորոգելին, մարդն այլևս չի ձգտում զբաղվելու կենսիմաստային, առավել ևս մետաֆիզիկական խորախորհուրդ խնդիրների լուծմամբ, բավական է դրանց եզրերով թեթև սահքը, իմաստների պարզ, հաճախ մակերեսային արձանագրումը: Նոր արժեքներն այնքան սրընթաց են ձևավորվում ու զարգանում, որ մարդը պարզապես ժամանակ չի գտնում դրանց ռացիոնալ իմաստավորման համար, նա առավելագույնը բավարարվում է միայն դրանց պարզ համադրությամբ կամ հակադրությամբ, վերածվում է պատրաստի արժեքներ սպառողի: «Բարին այլևս չարից անդին չէ, աբսցիսների և օրդինատների համակարգում ոչինչ որոշակի դիրք չի զբաղեցնում»[8]:

Կառուցալուծարվում է նաև առանցքի, «պատմության սլաքի» գաղափարը: Ժ. Դերիդան **ապակենտրոնությունը** հռչակում է որպես եվրոպական հոգևոր մշակույթի, հատկապես մետաֆիզիկայի քննադատության անհրաժեշտ պայման և պոստմոդեռնիստական կառուցալուծարման հիմնական նպատակ: Պատմության մետապատումը փոխակերպվում է համաշխարհային պատմության զարգացման միասնա-

---

* Նշանների տեսության մասին մաթեմատիկական նոր համընդհանուր գիտության նախագիծ, որի գլխավոր խնդիրը նմանությունների և տարբերությունների միջոցով կանոնակարգված աղյուսակներ կազմելն է:

[7] Տե՛ս **Бодрийяр Ж.** Система вещей. М., 1999, էջ 84-86:

[8] **Бодрийяр Ж.** Прозрачность зла. М., 2000, с. 11.

կան գործընթացը բացառող, աղճատված իրադարձությունների չհամակարգված, իրադրային նկարագրության: Իրերն այլևս իրենց սովորական իմաստով չեն ըմբռնվում, այլ, ինչպես նկատում է Դելյոզը, «ներկայացնում են չեզրակցող գծերի ու փոփոխությունների բազմազանություն»: Պոստմոդեռնիզմում գիծը նույնպես սովորական չէ. նախ՝ այն միշտ հակադիր է կետին, երկրորդ՝ սկիզբն ու վերջը էական նշանակություն չունեն, կարևորը դրանց միջև հարաբերությունն է: Գիծը անցում չէ մի կետից մյուսին, այն անցում է կետերի միջև, և, վերջապես, բոլոր գծերը գործընթացային են, դրանք հավերժ կայացում են, հետևաբար յուրաքանչյուր իր ոչ այլ ինչ է, քան կայացումների հանգույց: Պոստմոդեռնիզմին ավելի բնորոշ է կոտրատված գիծը՝ զիգզագը:

Եթե աշխարհը սկզբունքորեն քաոսային է, ապա այն չի կարող ունենալ միասնական ու ամբողջական մարդկային պատմություն: Պատմություն ընդհանրապես գոյություն չունի, այն իր տեղը զիջում է որևէ մեկից որևէ վերաբերմունք չպահանջող հավերժ կայացմանը: Անցյալն ու ապագան շատ բան չեն նշանակում, անցյալը միշտ ներկայի անցյալն է, ինչպես և ապագան միշտ ներկայի ապագան: Պատմությունը կորցնում է իր անընդհատությունը, ժամանակային հորիզոնները, ամեն ինչ տեղի է ունենում ներկայում ու ներկայի համեմատությամբ: Պատմաբանն այժմ մի հեռանկար ունի՝ դառնալ անցյալի հնագետը, որը պեղում է անցյալի գտածոներն ու ամբարում ժամանակակից գիտելիքի թանգարանում (Մ. Ֆուկո):

Պատմության սլաքի պրոգրեսիստական գաղափարին փոխարինում է Ժ. Դելյոզի և Ֆ. Գվատարիի կողմից մշակված պատմության՝ որպես **«ռիզոմայի»** գաղափարը: Ռիզոմա եզրը փոխառվել է բուսաբանությունից և ցույց է տալիս փնջածաղիկազգիների ընտանիքի բազմամյա, կոճղարմատավոր հիրիկ (iris) տեսակի խոտաբույսերի կենսագործունեության ձևը: Նեղ իմաստով ռիզոման բնորոշում է այդպիսի բույսերի ստորգետնյա, հորիզոնական դասավորված արմատները, որոնք տարածվում են հողի տակ և մակերեսից ծածկվում տերևներով: Ռիզոման ապակենտրոն, խառնիճաղանջ արմատախուրձ է, այն դժվար է արմատախիլ անել, քանի որ դրա յուրաքանչյուր հատում բարենպաստ պայմանների առկայության դեպքում վերընձյուղվում է: Որպես միանգամայն տարբեր փոխաբերություններ պոստմոդեռնիզմի տեսաբանները հակադրում են ռիզոման ու ծառը: Նրանց համար անընդունելի է բուն իսկ ծառի էությունը: Ծառը արմատներից, ծառաբնից ու ճյուղերից կազմված միասնականության խորհրդանիշ է, այն գենետիկական հիշողություն ու ուղղություններ ունի՝ վեր ու վար, կենտրոն ու «արվարձան», անցյալ ու ապագա, ամբողջական պատմություն, ընդհանրապես էվոլյուցիա և զարգացում: Ծառը գտնվելու վայր է, հատկությունների փոխանցման հիերարխիկ համակարգ: Ռիզոման այս ա-

մենի հակադրությունն է[9]: Որպես բույս, որը քարերի միջից կամրջվելով անցնում է, ռիզոման միշտ ինչ-որ բանով շրջապատված է և դրանով էլ կաշկանդված. աճում է դրանց միջից, միջով, միջև: Պոստմոդեռնիզմում ռիզոման նմանեցվում է մոլախոտին, մշակութային բույսերը որքան ավելի շատ են սահմանափակում, նեղում դրա կենսագործունեությունը, որքան ուժեղանում է դրա նկատմամբ ճնշումը, այնքան մեծանում է մոլախոտի գործունեության շառավիղը: Այսպիսով, ստացվում է, որ «սկիզբը» կամ «կենտրոնը» (մոլախոտի) աճը կանգնեցնող, սահմանափակող, դրա կայացման թելերը թուլացնող գործոններ են: Այն կազմակերպման համակարգված, աստիճանակարգված կառուցվածքի հակադրությունն է, կապերը պահպանվում են, բայց այդ կապերը առարկաների ու երևույթների միջև չեն: Ռիզոմային կապերը ինքնարժեք են, իրադարձային (կոնեկցիոնիզմ) ու իրադրային: Այդպիսի կապերը ոչ գծային են, անհամասեռ և կարող են ընդունել ցանկացած փոխտեղադրություն: Ռիզոմային միջավայրերը ոչ թե կիբեռնետիկական են (կենտրոնից կառավարվող), այլ սիներգետիկական:

Ռիզոմային միջավայրը, որտեղ ցանկությունները ճնշելու կամ հաղթահարելու որևէ անհրաժեշտություն չկա, գործունեության արդյունավետ դաշտ է հատկապես մտագարների (շիզոֆրենիկներ) համար: Ցանկությունները ստեղծագործական էներգիայի անսպառ ակունքն են, «գիտությունը, նորարարությունները, ստեղծագործությունները ծնվում են ցանկությունից, ոչ թե տեխնոկրատների կեղծ ռացիոնալիզմից»[10],- նկատում է Ֆ. Գվատարին: Շիզովերլուծական հետազոտությունները վկայում են, թե ինչպես են մտագար դառնում այն մարդիկ, որոնք հրաժարվում են իրենց ցանկությունները համապատասխանեցնել հասարակության պահանջներին ու կաղապարված նորմերին: Ժ. Դելյոզի և Ֆ. Գվատարիի համոզմամբ՝ արդի հասարակությունները շիզոֆրենիկներ են արտադրում ճիշտ նույն կերպ, ինչպես օճառ կամ մեքենաներ, միայն մեկ տարբերությամբ. շիզոֆրենիկների նկատմամբ շուկայական պահանջարկ չկա, այդ ապրանքը ձեռնտու չէ[11]:

Քանի որ, պոստմոդեռնիստների կարծիքով, պատմությունը մարդկային զոյի անկումների, ձախողումների, դատարկության հաջորդափոխում է, պատմաբանը պետք է ինտուիտիվ կերպով շարժվի՝ ինչպես ռիզոման ընդհատված, կոտորակված տարածության մեջ, որտեղ ո՛չ հստակ ուղեցույց կա, ո՛չ կողմնորոշիչ: Ժ. Դելյոզը վստահ է, որ նման մոտեցման դեպքում հնարավոր է անընդհատ ընդլայնել ուսումնասիրվող իրականության սահմանները: Պատմությունը դառնում է բազմակենտրոն, ճեղքվում, կոտրվում է, ընթանում տարաբնույթ հոսքերով, ո-

---

[9] Տե՛ս **Deleuze G., Parnet C.** Dialogues. N.Y.: Colombia Univ. Press, 1987, էջ 25:

[10] **Guattari F**. Molecular Revolution: Psychiatry and Politics. Harmondsworth, 1984, p. 86.

[11] Տե՛ս **Делез Ж., Гваттари Ф.** Анти-Эдип: Капитализм и шизофрения. Екатеринбург: У-Фактория, 2007, էջ 551:

րոնց ապագան անորոշ է: Ռիզոմայի տեղն այնտեղ է, որտեղ ճեղքվածքներ, խոռոչներ, անկումներ ու մարդկային գոյի այլ ձախողումներ կան, նրա համար չկան անանցանելի, անհաղթահարելի սահմաններ՝ անկախ այն բանից՝ դրանք բնական են, թե արհեստական: Ռիզոման սովորեցնում է առաջ ընթանալ գոյի «հատված տեղանքում», օգնում ընդարձակել ուսումնասիրվող իրականության կողմերն ու սահմանները, կենտրոնանալ ոչ թե առանցքի, այլ հանգույցների ու ընդհատումների բազմազանության վրա, շրջանը վերածվում է բազմանկյան[12]: Անցումը, շարժումը, միջևն ամեն ինչ են, կենտրոնացումը, ուղղությունը, նպատակը՝ ոչինչ: Համընդհանուր հրամայական արժեքների բացակայությունը, կասկածն ու անվստահությունը պարարտ հող են ստեղծում անտարբերության ձևավորման և դրա շարունակական վերարտադրության համար: Ոչ մի ավանդույթ, ոչ մի ժառանգորդում, ոչ մի սրբություն: Պոստմոդեռնիզմն ազդարարում է պատմության «առանցքային ժամանակի» (Կ. Յասպերս) ավարտը:

Հետարդիական մշակույթում ռիզոմային հավասարարժեք այլ փոխաբերություն է լաբիրինթոսը. այնտեղ նույնպես ո՛չ կենտրոն կա, ո՛չ արվարձան: Լաբիրինթոսը չի ենթարկվում գծային տրամաբանությանը ու ենթակա չէ դրան, այն անսահմանափակ քանակությամբ մուտքեր ու ելքեր, միջանցքներ ու փակուղիներ ունի: Այսուհետ մարդկությունն ապրում է անհայտ ելքով լաբիրինթոսում, ինչի մասին շատ ավելի վաղ կանխատեսել էր աբսուրդիստական արվեստը: Պատմության պոստմոդեռնիստական հարացույցի ելակետային բնութագիծ են դառնում բացարձակ անորոշությունն ու անկայունությունը: Պատմությունն ընկալվում է որպես հավերժորեն բաց իրողություն:

Պատմության կառուցվածքի և պատմական գործընթացների յուրատեսակ մեկնաբանություն է ներկայացնում Մ. Ֆուկոն: Հղում կատարելով Կ. Մարքսին, որը, իր գնահատմամբ, մեծ ներդրում է ունեցել պատմության՝ որպես հասարակական-տնտեսական ֆորմացիաների հետևողական հաջորդափոխման նոր տեսության ձևավորման մեջ, ֆրանսիացի փիլիսոփան նկատում է. «Ժամանակն է, որ պատմությունը դադարի ծառայել մարդաբանությանը»[13]: Պատմագրության և պատմության փիլիսոփայության գերագույն խնդիրը պետք է լինի ոչ թե պատմական գործընթացներում մարդու ֆենոմենի և սոցիալական հարաշարժության համատեքստում նրա գործունեության վերլուծությունը, այլ այն հասարակության ուսումնասիրությունը, որին պատկանում է մարդը: Սրանով Մ. Ֆուկոն «սուբյեկտի մահվան» իր դրույթը տարածում է նաև պատմության վրա: Անհրաժեշտ է արմատապես փոխել պատմության մեջ մարդու տեղի և դերի մասին պատկերացումները, հաղթահարել եվրոպական ավանդական փիլիսոփայության այն հա-

[12] Տե՛ս **Guattari F**., նշվ. աշխ., էջ 18:
[13] **Фуко М**. Слова и вещи. Археология гуманитарных наук. СПб., 1994, с. 399.

մոզմունքը, որ պատմության արարիչն ինչ-որ անձնավորված «Ես» է[14]:

Պոստմոդեռնիստական պատմափիլիսոփայության մեկ այլ՝ շատ ինքնատիպ մեկնաբանություն է ներկայացնում Մ. Ֆուկոյի սերնդակից փիլիսոփա և նշանագետ Ռ. Բարտը: Կյանքն ընդամենը բովանդակազուրկ, «անիրական» աշխարհի մասին ապրում է: «Միֆաբանություններ» հետազոտությունում նա նկարագրում է ոչ այնքան բուն աշխարհը, որքան այդ աշխարհի մասին միֆը, իրականության օտարված, ձևախեղված պատկերը: Ռ. Բարտը կարծում է, որ ժամանակակից աշխարհը «միֆական նշանակությունների արտոնյալ ասպարեզ է»[15]: Ինչ խոսք, «միֆոլոգիան աշխարհի հետ համերաշխություն հաստատելու եղանակ է, բայց ոչ այն աշխարհի, ինչպիսին այն կա, այլ այն, ինչպիսին ինքն իրեն ուզում է դարձնել»[16]: Միֆականացված որևէ իրողություն, անկախ իր ոլորտից ու բնույթից, պատմություն չունի: Միֆն իմաստ և նշանակություն է ստանում միայն որևէ նշանադիցաբանական համակարգի կոնկրետ համատեքստում: «Միֆում,- նկատում է Ռ. Բարտը,- պատմությունը չքվում է, այն՝ որպես իդեալական աղախին, ամեն ինչ պատրաստում է, դասավորում, բայց տիրոջ հայտնվելուն պես անաղմուկ անհետանում է»[17]: Բարտի կածիքով, սոցիալական դիցաբանությունն ունիվերսալ է, նրա իրավազորությանը ենթակա են հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտները՝ քաղաքականությունը, տնտեսությունը, մշակույթը, անգամ անհատի մասնավոր կյանքը:

Իրականի և բնականի լուսավորական «պատրանքների» նկատմամբ անվստահությունը դառնում է նաև Ժ. Բոդրիյարի պատմափիլիսոփայական անդրադարձների հիմնական գաղափարը: Նա պատմական գործընթացների նշանագիտական մեկնաբանության փոխարեն առաջարկում է օգտագործել գոյաբանականը: Ժ. Բոդրիյարը քննարկման առարկա է դարձնում ոչ թե լեզվի մեջ ամրագրված դիցաբանական արքետիպերը՝ միֆոլոգեմները (Կ. Յունգի և Կ. Քերենյիի կողմից ստեղծված եզր), այլ իմաստային երկարժեք նշանակություն ստացած սոցիոմշակութային իմիտացիոն իրողությունները: Նա «միֆ» եզրը փոխարինում է Ժ. Բատայից փոխառված և ժամանակի հետարդիական հոսքը ներկայացնող փիլիսոփայագոյաբանական երանգավորում ունեցող **«սիմուլյակր»**[18] (կեղծանմանակ, նենգապատկեր) եզրով: Սիմուլյակրը արտահայտում է օբյեկտի հանդեպ նշանի, բնօրինակի հանդեպ պատճենի, բնականի հանդեպ արհեստականի գերիշխող արժեքն ու նշանակությունը: Ամեն ինչ վերածվում է նշանների հաջորդականութ-

---

[14] Տե՛ս **Фуко М.** Археология знания. Киев, 1996, էջ 12:

[15] **Барт Р.** Мифологии. М., 2000, с. 264.

[16] Նույն տեղում, էջ 284:

[17] Նույն տեղում, էջ 278:

[18] Սիմուլյակրի էության և ձևավորման ընթացքի մասին տե՛ս **Бодрийяр Ж.** Симулякры и симуляции. М.: Издательский дом Постум, 2015, էջ 12:

յան[19]: Սիմուլյակրը սոսկ վերասերված պատճեն չէ: Ժ. Բոդրիյարի կարծիքով, այն ներամփոփում է զարմանալի մի ուժ, որը ժխտում է և՛ բնօրինակը, և՛ պատճենը: Ֆիզիկական կոնկրետ օբյեկտների հետ զուգորդման շնորհիվ սիմուլյակրներն աստիճանաբար ձեռք են բերում ինքնավար իմաստ և նշանակություն՝ դրանով իսկ ստեղծելով իրականության այնպիսի պատրանք, որն ամրագրվելով ավելի իրական է ընկալվում, քան ռեալ իրականությունը: Ըստ էության, սիմուլյակրն իրականության մեջ իր նախատիպը, այսինքն՝ նշանակելի օբյեկտը չունեցող սեմիոտիկական նշան է:

«Խորհրդանիշային փոխանակումը և մահը» աշխատանքում Ժ. Բոդրիյարն առաջարկում է պատմության տիպաբանությունը բնութագրող երեք կարգի սիմուլյակրներ: Արևմտյան քաղաքակրթության մեջ այդ կեղծապատկերները, Վերածննդի դարաշրջանից սկսած մինչև արդիականություն, հաջորդել են միմյանց և սահմանել սոցիումի օտարված ձևերի ընդհանուր նկարագիրը: Դրանք են՝ նմանակում (Վերածնունդ), արտադրություն (արդյունաբերական հասարակություն) և սիմուլյացիա (հետարդյունաբերական հասարակություն): Ժ. Բոդրիյարը կարծում է, որ ժամանակակից հասարակությունը գտնվում է երկրորդ կարգի սիմուլյացիայից երրորդին անցնելու փուլում[20]: Այս շրջափուլում փոխանակության միջոցները, քիչ առ քիչ կորցնելով երբեմնի սպառողական արժեքը, ձեռք են բերում խորհրդանիշային իմաստ և արժեք: Խորհրդանիշային փոխանակությունը, դառնալով ժամանակակից սպառողական հասարակության հիմնարար ունիվերսալիա, սկզբունքորեն տարբերվում է տնտեսական փոխանակությունից: Այն այլևս ոչ թե միջոցների (ապրանքներ և ծառայություններ) անմիջական փոխանակում է, այլ ընդամենը ապրանքանիշերի (բրենդ) և նշանների փոխանակում, ընդ որում՝ փոխանակողների փոխգործակցությունը ոչնչով սահմանափակված չէ, քանի որ բնույթով սիմվոլիկ է (փոխանակությունը տեղի է ունենում խորհրդանիշների միջև և ոչ թե խորհրդանիշների ու իրականության), խախտվում է իրականության հետ փոխգործակցության կապը[21]: Ռեալի և ռացիոնալի հոգեվարքն ազդարարում է սիմուլյացիայի դարաշրջանի սկիզբը: «Ռեալության նախկին սկզբունքի փոխարեն այսօր մեզ կառավարում է սիմուլյացիայի սկզբունքը»[22]: Հասարակությունն սկսում է գործառել որպես անանուն, փոխադարձաբար փոխարինելի, վաղանցիկ ու երևութական նշանների համակարգ: Սոցիումը սոցիալ-պատմական նշանակություն ունեցող անձնավորված արարքների իմաստի և նպատակների նկատմամբ դառնում է իներտ և անտարբեր: Պատմությունն այլևս չի ընկալվում

[19] Տե՛ս **Борийяр Ж.** Общество потребления. М.: Республика, 2006, էջ 164-166:
[20] Տե՛ս **Бодрийяр Ж.** Символический обмен и смерть. М., 2000, էջ 58:
[21] Տե՛ս նույն տեղը, էջ 147-155:
[22] Նույն տեղում, էջ 113-122 :

որպես ռացիոնալ շահամիտում և իմաստ ունեցող միասնական գործընթաց: Համաշխարհային պատմությունը տարեցտարի դառնում է «դեպի դարձերեսը շրջված բոլորակային շարժում» (մոբյուսի ժապավեն)[23]: Ձևավորվում է աշխարհի մի պատկեր, որտեղ կարծես ոչինչ տեղի չի ունենում, քանի որ ինչ էլ որ այնտեղ կատարվում է, այլևս ոչ ոք չի դիտարկում որպես Իրադարձություն: Պատմությունը դառնում է սիմուլյակրների ծավալման թատերաբեմ, լղոզված, առընթեր, անէական, ավելին՝ պատմությունն ինքը դառնում է սիմուլյակր: Այստեղ իմաստ փնտրելն անիմաստ է: Սոցիալ-քաղաքական և սոցիոմշակութային պատմական ինստիտուտներին փոխարինում են իրենց իսկ սիմուլյակրները, գոյություն չունեցող բնագրին՝ իրենց պատճենները: Սիմուլյացիայի երրորդ շրջափուլում խարխլվում են ֆանտազիայի և իրականության սահմանները: Ձևավորվում է հիպերռեալություն ֆենոմենը: Այլևս էական չէ, թե ինչն է իսկապես իրական, ինչը՝ ոչ, էական է միայն անվերջ հոսող լուրերի ու իրադարձությունների անընդհատությունը[24]: Մարդկությունը թևակոխում է զարգացման մի շրջան, երբ տեղեկատվական հոսքն անընդհատ մեծանում է, իսկ իմաստը՝ նվազում, տեղեկատվությունն իմաստ արտադրելու փոխարեն խաղարկում է այն, սկսում է «խժռել իր իսկ բովանդակությունը», հաղորդակցությունն ու իրական սոցիալականը: Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաներ կիրառող ժամանակակից օգտատերը հաղորդակցային խաղընկերոջն անգամ որպես դերային գործառույթների թանձրուկ՝«մասնակի Ուրիշ» (ինչը բնորոշ էր Մոդեռնին) չի ընկալում, Ուրիշը նրա համար ընդամենը տեղեկատվական կոդերի, նշան-հաղորդագրությունների գործառող անդեմ համակարգ է: Ձևավորվում է անսուբյեկտ սոցիալականության մի պարադոքսալ հասարակություն: Հասարակության նախաբեմ է դուրս գալիս ոչ թե հեղինակը, ինչը բնորոշ էր հասարակության նախորդ պատմական տիպերին, այլ ակտորը, ճանաչման և մեծարանքի է արժանանում ոչ թե հեղինակը, այլ կատարողը և հանդիսատեսը: Սոցիալական կեցության մեջ ամեն ինչ դառնում է սիմուլյատիվ: Կրճատվում է ռեֆլեքսիայի, վերացարկման, զարգացման խորհրդանիշների սոցիոմշակութային միջավայրը, հասկացությունները փոխարինվում են հաղորդագրության կոդ հանդիսացող պատկերներով, առավելագույնս պարզունակացված սոցիոկեցությունը զրկվում է բնական ու ջերմ շփման անփոխարինելի հմայքից:

Անվիճելի է, որ հիպերռեալությունը շատ ավելի գրավիչ է, քան այն ռեալությունը, որը մեր ամենօրյա գոյության սովորական միջավայրն է: Հիպերռեալության պայմաններում ձևավորվում են սոցիոմշակութային հատուկ դիրքորոշում-սպասումներ, որոնք դրսևորվում են որպես ոչ համակարգային, իրադրային բնույթ ունեցող այնպիսի սո-

[23] Տե՛ս նույն տեղը, էջ 97:
[24] Տե՛ս նույն տեղը, էջ 29:

ցիալական ծածկագրեր, իմաստներ կամ սոցիալական պրակտիկաներ, որոնք օգնում են հարմարվել անորոշ պայմաններին, ոչ գծային արտաքին միջավայրին: Սպասելի արդյունքները ձևավորում են դրական դիրքորոշում, հույս և վստահություն: Սակայն հիպերռեալության պայմաններում սոցիալականը, կորցնելով իր երբեմնի արժեքն ու նշանակությունը, թաքցնում է իր թիկունքում գտնվող սոսկական վերացարկումը: Այն վերածվում է հոգսաշատ կեցությունից փախուստի վիրտուալ ապաստարանի:

«Մետապատումների մայրամուտի» շրջափուլը այնուամենայնիվ չի վկայում պատմության վախճանի մասին (Զ. Բաուման): «Մեր Ապոկալիպսիսը ոչ թե ռեալ է, այլ վիրտուալ,-նկատում է Ժ. Բոդրիյարը,- և այն ոչ թե ապագայում է, այլ հենց այստեղ և հենց այս պահին… Դա մեզ ազատում է ապագա ամեն աղետի և դրա համար պատասխանատվության ցանկացած պարտավորությունից»[25]: Սրանով պայմանավորված՝ այսուհետև ուշադրությունը պետք է բևեռել ոչ այնքան պատմության վախճանի, որքան պատմության մեջ սոցիալական հիմունքների ուսումնասիրության վրա:

Եվ այսու, «համընդհանուր պատմության ձանձրույթը» (Ժ. Բոդրիյար) «փարատող» պոստմոդեռնիստական անհատապաշտական նախագիծն ապագայի հանդեպ լավատեսության հիմքեր չի ներշնչում: Սա կասկածելի է դարձնում սոցիալական հարաշարժության ծրագրերում նրա պահանջարկված լինելու հանգամանքը՝ մարդկանց զրկելով բարեկեցիկ պատմական վերջաբանի և պատմական էվոլյուցիայի հանդեպ ինքնավստահ հավատից: Այնուամենայնիվ, պետք է ընդունել, որ պոստմոդեռնիզմը հետազոտողների համար հնարավորություն է ընձեռում անդրադառնալու այն «ճակատագրական կասկածներին» (Զ. Բաուման), որոնք պատմության ստեղծագործական մեկնաբանության համար կարող են լուրջ նախահիմքեր դառնալ: Պատմության այն շրջափուլը, երբ ժամանակակից քաղաքակրթությունն իր տարերքի մեջ էր, ըստ էության, ավարտվել է[26]: Պատմությունն այլևս ո՛չ բարեկեցիկ անցյալի, ո՛չ էլ երաշխավորված առաջընթացի նկարագրությունն է, այլ ոչնչով չապահովագրված ռիսկի դաշտ: Պոստմոդեռնիզմը «մեզ կոպտորեն արթնացնում է քաղցր նիրհից և, ակնթարթորեն սթափեցնելով» (Զ. Բաուման), պարտադրում նորովի անդրադառնալ հումանիտար ոլորտի ողջ պատմությանը, բայց այս անգամ՝ որպես «սխալների ու աղավաղումների» պատմություն: Հարգանքի են արժանի պոստմոդեռնիստական կոչերը՝ «բացահայտելու ընդմիշտ հաստատված կարգի կեղծիքը», «ծաղրելու արտոնագրված ամբողջական իմաստ վաճառողների գոռոզամտությունը, որոնք այնպես են հպարտանում, ասես եղել են բացարձակ ճշմարտության պալատում և ճաշակել վերջնական

[25] Նույն տեղում, էջ 24:

[26] Տե՛ս **Бауман З.** Спор о постмодернизме // Социологический журнал, 1994, № 4, էջ 73:

իմաստության սեղանից»[27]: Պատմության փիլիսոփայությունը դառնում է ոչ թե «սկզբունքային կոորդինացիայի ոլորտ», այլ «հնարավորությունների ամբողջություն», հնարավորություններ, որոնք դեռ ամբողջովին չեն որոշարկվել և մինչև վերջ երբեք չեն հիմնավորվել: Պոստմոդեռնիզմը պատմության փիլիսոփայությանն է վերադարձնում պատմական փաստերի ու իրադարձությունների որակական կշռի խնդիրը, որը պոզիտիվ փիլիսոփայության կողմից վաղուց փակվել էր: Եվ վերջապես. պոստմոդեռնիզմը նորովի է ներկայացնում փիլիսոփայի առաքելության հարցը. «Բռնել այն, ինչը սահում է ձեռքերից, ինչին չեն հասնում կամ չեն ուզում դիպչել ձեռքերը»[28]: Պատմության փիլիսոփայության մեջ կարևորվում է լրջազույն մի խնդիր՝ ուսումնասիրել անցյալի բոլոր «այլընտրանքային շանսերն ու հնարավորությունները»՝ դիտարկելով դրանք որպես իրավահավասար:

Եվ այսու, ճիշտ է, պոստմոդեռնիստական տրամասությունը չի ներկայացնում անհերքելի, անբեկանելի ճշմարտություններ, բայց այն հետազոտողին սովորեցնում է ստեղծագործել **պատմության հավերժ բաց հորիզոնում**, որի գլխավոր հատկանիշն անկայունությունն է:

Բանալի բառեր *–լուսավորականության նախագիծ, պոստմոդեռնիզմ, կառուցալուծարում, խաղ, սուբյեկտի մահ, մետապատում, ռիզոմա, լաբիրինթոս, կեղծանմանակ*

ГАГИК СОГОМОНЯН – ***Постмодернизм как историко-философский проект современности.*** **–** В статье анализируется феномен истории в постмодернистской традиции, прослеживается динамика представлений о социальной истории таких известных философов-постмодернистов, как Ж.-Ф. Лиотар, М. Фуко, Р. Барт, Ж. Делёз, Ж. Бодрийяр, с точки зрения взаимосвязи интерпретаций истории и трактовок проблемы человека.

Ключевые слова: *проект просвещения, постмодернизм, деконструкция, игра, смерть субьекта, метанарратив, ризома, лабиринт, симулякр*

GAGIK SOGHOMONYAN – ***Postmodernism as a Historical and Philosophical Project of Modernity.*** – The article is devoted to the consideration of the phenomena of personality and history in the post-modernism tradition. The author follows the dynamics of the views about the social history of such philosophers as J.F. Lyotard, M. Foucault, R. Barthes, G. Deleuze, J. Baudrillard from the point of correlation between interpretations of history and the problem of Man.

Key words: *project of enlightenment, postmodernism, deconstruction, game, the death of the subject, metanarrative, rhizome, labyrinth, simulacrum*

Ներկայացվել է՝ 10.08.2020, Գրախոսվել է՝ 31.08.2020, Ընդունվել է տպագրության՝ 18.12.2020

[27] Նույն տեղում, էջ 24:
[28] Նույն տեղում, էջ 79: